ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

ԷՔԵՊԵՏ ԷՄՍԱՓԷՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒ ԱԶԳԱՅԻՆ։

Վ. Եհափառ Հայրապետի բարի ցանկութեան և կամքի համաձայն այս 1888 թուականից սկսած Արարատ ամսագիրը թէ իւր բովանդակութեան և թէ դիրքի կողմանէ ենթարկուելու է բարեփոխութեան։ Այր Աթոռոյս միաբանութեան հետ հրաւիրուում են աշխատակցելու Արարատին և Հեմարանի ուսուցչական խումբն, ինչպէս և Ազգիս մէջ ամենուրեք գտնուող բանասէր, գիտնական և ուսումնական անձինք։

Արարատի խմբագրութիւնը, Տորին Օծութեան հրամանի համեմատ, պարտաւորուում է հրատարակութեան յարմար համարուած յօդուածների իւրաքանչիւր տպագրական թերթի համար վարձատրութիւն վճարել 25—40 ռուբլի, եթէ յօդուածագիրն այդ կը ցանկայ։ Յօդուածների ընտրութիւնն և վարձատրութեան քանակութեան որոշումը կպատկանի մանաժողովին, որ հրամանաւ Տորին Օծութեան կը կազմուի։

Արարատը կ'հրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագինը տարեկան է և սկսում է յունուար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում 4 ր. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում 5. ր. իսկ Հնդկաստանում և Եգիպտոսում 6 ռուբլի. Հայաբնակ գաւառներում և քաղաքներում ատորագրուել ցանկացողք թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին։ Հասցէն՝ Эчміадзинъ Типогр. Комитетъ—Տպարանական Ժողովին։